«Հայաստան» համահայկական հիմնադրամ
Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինություն

"Hayastan" All-Armenian Fund
Directorate of the Armenian Genocide Centennial Events

Հիշում եմ և պահանջում

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի
ԻԱԿ իրավաբան Գևորգ Հայրապետյանին

Հարգելի Հայրապետյան,

Սիրով ուղարկում ենք Ձեր՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման գրասենյակի տնօրինությանն ուղղված հարցերի պատասխանները:

1. *Ո՞ր պետությունների ղեկավարներն են պաշտոնապես հաստատել իրենց մասնակցությունը ապրիլի 24-ին Երևանում՝ Ցեղասպանության 100-ամյա տարելիցին:*

Տեղեկացնում ենք, որ Երևանում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին ներկա էին 4 երկրների նախագահներ՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի, Կիպրոսի եւ Սերբիայի: Մանրամասները՝ http://news.am/arm/news/262894.html :

2. *Կա արդյո՞ք 100-ամյակի ծրագրերի և միջոցառումների ամբողջական ցանկ:*

Տեղեկացնում ենք, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ մարտի 18-20-ին անցկացվեց «Արարատի ստորոտին» խորագրով միջազգային մեդիա-ֆորումը, ապրիլի 22-23-ին՝ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» միջազգային ֆորումը, ապրիլի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում բաց խորանի մոտ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությունը, նույն օրը՝ ապրիլի 23-ին, Հայաստանի Հանրապետության հրապարակում տեղի ունեցավ ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման համար մշտապես պայքարող SOAD ռոք խմբի համերգը: Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում տեղի ունեցավ հանդիսավոր նիստը,

© 2015 Directorate of the Armenian Genocide Centennial Events. All Rights Reserved.
33a Moskovyan str., 0002 Yerevan, Armenia. Tel.: +374 10 530062
URL: www.armeniangenocide100.org, e-mail: org@armeniangenocide100.org

Ալ. Սպենդիարյանի անվան Օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում կայացավ համաշխարհային 24/04 սիմֆոնիկ նվագախմբի «Վերածնունդ» համերգ-ակցիան, օրվա ավարտին Հանրապետության հրապարակից մեկնարկեց ավանդույթ դարձած ջահերով երթը:

Կայացած և առաջիկայում կայանալիք միջոցառումների մասին մանրամասներ կարող եք իմանալ ՝ հետևելով հղումներին՝ http://armenpress.am/arm/news/804239/hh-nakhagahy-amn-um-kmasnakci-cexaspanutyan-100-rd-tarelici.html , http://armenpress.am/arm/news/804279/hasmik-poxosyany-khosel-e-cexaspanutyan-tarelici-mijocarumneri.html , http://news.am/arm/news/265219.html :

3. *Որքա՞ն է կազմում 100-ամյակի ընդհանուր բյուջեն:*

Նախանշված ժամկետում բյուջեի տվյալները հասանելի կլինեն հանրությանը:

4. *Որքա՞ն գումար է ծախսել կամ նախատեսում հատկացնել Հանձնաժողովը կոնկրետ միջոցառումների և ծրագրերի համար, ի՞նչ հանգամանքություններով են գոյացել այդ գումարները:*

5. *Ո՞ր ընկերությունների հետ է համագործակցել կամ համագործակցելու Հանձնաժողովը կոնկրետ ծրագրերի շուրջ , և որքա՞ն գումար է հատկացվել կամ հատկացվելու այդ ընկերություններին:*

Հարցերի պատասխանները կարող եք գտնել՝ հետևելով հղմանը՝ http://www.tert.am/am/news/2015/05/04/sargsianv/1665138 :

Հայոց ցեղասպանության
100-րդ տարելիցի միջոցառումների
տնօրինության գլխավոր տնօրեն

Արման Ծատուրյան

© 2015 Directorate of the Armenian Genocide Centennial Events. All Rights Reserved.
33a Moskovyan str., 0002 Yerevan, Armenia. Tel.: +374 10 530062
URL: www.armeniangenocide100.org, e-mail: org@armeniangenocide100.org